ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-15-1-17/04» ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակում գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 20 ապրիլի 2017թ.

Սույն թվականի ապրիլի 20-ին ժամը 14.30-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-15-1-17/04» ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակում գնային առաջարկների բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Խ. Ժ. Սաֆարյանը, հաձնաժողովի անդամներ՝ Լ. Գ. Սիրունյանը, Ս. Պ. Կարապետյանը: Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց գրանցամատյանի գրառումների մասին, ըստ որի հայտ պարունակող ծրարներ են ներկայացել «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ (ք. Երևան, Պուշկինի 1) և «Մաքսիուր» ՍՊԸ (ք. Երևան, Տպագրիչների 8) կազմակերպությունները:

Հայտեր պարունակող ծրարներ չեն ներկայացրել ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1 շրջանակային համաձայնագիր կնքած և հրավերն ստացած թվով 80 կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր:

Հանձնաժողովը գնահատեց.

1) «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
   - շրջանակային համաձայանագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում:
   - հայտարարություն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին:
   - հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին:
   - հայտարարություն՝ տեխնիկական միջոցներ մասին:
   - հայտարարություն՝ ֆինանսական միջոցների մասին:
   - հայտարարություն՝ աշխատանքային ռեսուրսների մասին:
   - գնի առաջարկ՝ բոլոր 3 չափաբաժինների համար:
   - հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

   Ծրարում առկա էր մեկ բնօրինակ, երկու պատճեն, յուրաքանչյուրը՝ ութ էջից:

2) «Մաքսիուր» ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
   - շրջանակային համաձայանագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում: